



Синяя птица

Лимонная

36x5



17.8.11 / 1894



ՀԱՄԱՍՖԻՒԹ


(ՀԵՐԻԱԹ)



ԳՐԱՑ

ԳՐԻԳՈՐԻԱՆ ԶԱՅ. ՍԱՑԻՆԵԱՆՑ

Արտադրած «Աղբեր» ամսագրի 1893 թ.



Թիֆլիս
Տպարան Յ. Վարդականի *** Տիպ. Խ. Վարդական, Ղազ. պլ.

1894

"Kugel" auf einer grünen Grinde: 1444

891.995.

U-33 ✓

ՀԱՄԱՍՎԱՓԻՒԹ



ԳՐԻԳՈՐԻՈՒ ՔԱՅ. ՍԱՏԻՆԵԱՆՑ

Արտաստպած «Աղբիւր» ամսագրի 1893թ.

2004

ΦΗΦΙΟΥ

Տպարան Ա. Վարդանեանի ** Տիպ. Մ. Վարդանյան, Գանով. սլ.

1894

Доз. цензурою. Тифлисъ, 8-го Ноября 1893 г.

ՀԱՄԱՍԹԻՒԹ

(ՀԵՔԻԱԹ)

I

ին ժամանակներում գիւղական մէկ
հին տնակում ապրում էր մի չքաւոր
այրի կին իր միակ տառներկու տարե-
կան դուստր Համասփիւռի հետ։ Այրի կինը
իր ամուսնու մահից յետոյ ստիպուած էր
ամեն նեղութիւններ քաշել իրանց ապրուստի
համար։ Նա գնում էր գրացի գիւղացիների
մօտ եւ օգնում էր նրանց տնային գործե-
րում։ Գիւղացիները տեսնելով խեղճ այրի
կնոջ գրութիւնը եւ նրա հաւատարիմ ծա-
ռայութիւնը, վարձատրում էին նրան իրանց
ունեցած գիւղական արդիւնքներից։ Նրա աշ-

խատելու աւելի ծանր օրերը լինում էին աշխառուայ եւ աշնան եղանակներին, երբ ունեւ ւոր գիւղացու գործերը աւելի շատ էին լինում, քան թէ տարուայ միւս եղանակներին։ Աչա այսպիսի ամիսներում ինեղճ այրին կարողանում էր ոչ թէ միայն իր օրական ապրուստը ձեռք բերել, այլ եւ ձմեռուան համար ապրուստի պաշար էր պատրաստում։ Համասփիւռն էլ տանը անգործ չէր մնում, նա՝ իր մօր նման աշխատասէր լինելով՝ իրանց տանը աշխատում էր, երբեմն բուրդ էր լուանում, քրքրում էր, թել էր մանում եւ գուղաներ գործում։ Նա իր մօր բացակայութեան ժամանակ աշխատում էր նրա պատուէրները ճշտութեամբ կատարել։ Առաւտաները նրա առաջին գործը լինում էր գիւղի աղբիւրից ջուր բերելը, տան եւ սրահի աւելելը. նա մինչեւ երեկոյ աշխատում էր. պատահում էր, որ Համասփիւռը ջրի համար աղբիւրը գնալիս կամ վերադառնալիս՝ ճանապարհին փայտի մանր կտորներ էր գտնում, որ իր գոգնոցի մէջ ժողովելով, բերում էր տուն եւ իրանց սրահի մի անկիւնում գիւղում ձմեռուայ համար։ Նա այս բոլորը ա-

նում էր առանց ձանձրանալու, մանաւանդ՝ երբ տեսնում էր իր մօր կրած չարչարանքը՝ ամբողջ օրը գրացի գիւղացիների տանը արած ծանր աշխատութիւնները. եւ երբ երեկոները տուն էր վերադառնում, յոգնածութիւնից հազիւ թէ շունչ էր քաշում։ Եւ ահա այսպիսով մայրը եւ աղջիկը տարուայ այս եղանակներին շարունակ աշխատութեան մէջն էին եւ այնքան պաշարեղէն էին ձեռք բերում, որ իրանց բաւականացնում էր։

Ոշնան սկզբներում մէկ օր Համասփիւռի մայրը գրացի գիւղացու տունը գնաց հաց թիւելու եւ երբ ճաշի ժամանակը մօտեցաւ, մայրը տուն եկաւ եւ բերեց մէկ հաց եւ մի կտոր պանիր, որ նա ստացել էր գրացի գիւղացուց։ Նա գիտէր, որ իր տանը հաց չկար ռւետելու, եւ Համասփիւռը մինչեւ երեկոյ առնօթի պիտի մնար. բերած հացից եւ պանրից մի փոքր մասը տուեց Համասփիւռին ուտելու, իսկ մնացածը պատուիրեց, որ ընթրիքի համար պահի եւ զգոյշ կենայ, որ հացը գող կատուի ճանկը ընկնի։ Եւ ապա գնաց կրկին աշխատելու, յանկարծ Համասփիւռը տեսաւ մի ծեր մուրացկան, որը՝ դառն արտասուք

թափելով՝ Համասփիւռից ուտելիք էր խնդըրում։ Համասփիւռը տեսնելով նրա արտասուրքը, սիրտը սկսեց մորմոքալ. ծերունու նիշար գէմքից, բորբիկ ոտներից եւ ցնցոտի հագուստից երեւում էր, որ նա օտար տեղից մի ճանապարհորդ է։ Համասփիւռը վազեց եւ խսկոյն բերեց իրանց համար պահած հայի եւ պանրի կտորները ու տուեց մուրացկանին։ Սա օրհնեց փոքրիկ աղջկան եւ անհետացաւ։ Նրա գնալուց յետոյ Համասփիւռը ուրախ նստեց սրահի առաջ եւ սկսեց գուլպայ գործել։ Նրա մանկական սիրտը ուրախութիւնով լիքն էր այն պատճառով, որ ինքը իր չքաւոր տեղովը աւելի չքաւորին կերակրեց եւ նրանից օրհնութիւն ստացաւ։

Երբ նա այս ուրախութեան մէջն էր, յանկարծ յիշեց հայի ու պանրի համար իր մօր տուած պատուէրը. արդէն նրա գալուժամանակն էլ մօտենում էր։ Համասփիւռը սկսեց մտածել թէ՝ իր մօրը հաց ու պանրի համար ինչ ասէ։ Նա չէր ուզում իր արած ողորմութիւնը ոչ մօրը յայտնել եւ ոչ դրացիներին, խոկ մայրը պիտի կարծէր թէ Համասփիւռի անզգուշութիւնից հաց ու պանիրը

գող կատուի բաժին են գարձել, որի համար նա նախատինք եւ յանդիմանութիւն պիտի ստանար իր մօրից։ Նա իր մորի մէջ ասում էր թէ՝ «ինչ ասեմ իմ մօրը եւ կամ ի՞նչով նրան կերակրեմ երեկոյեան»։ Այս յիշելով, նա յանկարծ՝ մտածմունքի մէջ ընկաւ եւ սկսեց տիրել. գուլպան ձեռքից վայր ձգեց գետնին եւ լալով հեռացաւ տնից, դրացիներն անգամ չիմացան, թէ նա ուր փախաւ։ Համասփիւռը գիմելով անտառ՝ աշխատում էր մի միջոց գտնել, որ մուրացկանի տարած հաց ու պանրի փոխարէնը ձեռք բերի եւ գրանով իր ծածուկ արած ողորմութիւնը ծածկի։ Խեղճ աղջիկը շուարած էր մնացել. վազվզում էր անտառի մէջ այս եւ այն կողմերը, կարծելով թէ իրան կ'օգնեն եզներ արածացնող գիւղացի տղաները, բայց ի զուր . . . նա այնպէս գլուխը կորցրել էր, որ իրան ծանօթ անտառից անցել էր մի այլ հեռաւոր ու անծանօթ անտառ։ Նա աւելի շփոթուեց, երբ ճանապարհի հետքերը կորցրեց. արդէն իրեկոյ էր եւ նա մոլորուած մնացել էր անտառի խորքում։ Նա վճռեց, որ ամեն բան պատմէ իր մօրը, եթէ միայն

անծանօթ անտառից դուրս գալու հնարք
գտնի եւ իր մօր գնալուց առաջ տուն հաս-
նի: Յանկարծ նրա աչքին մի բլրակի վրայ
կառուցած հոյակապ պալատ երեւաց՝ ընդար-
ձակ պարսպով շրջապատած, որին կից կար
նաեւ մի պարտէզ, իսկ պարտէզից դուրս
գտնւում էր մի աղբիւր, որի ջուրը թափ-
ւում էր պարտէզի համար շինած քարէ ա-
ւազանը: Անտառի մէջ եղած պալատը պատ-
կանում էր նոյն երկրի իշխանին, որն որսի
գնալիս՝ հանգստանալու համար շինել էր
տուել: Համատիւռին այդ յայտնի չէր, նա
վախով ծածուկ մօտեցաւ պալատի ետեւի
կողմը եղած պարսպին եւ՝ կամաց կամաց մօ-
տենալով պարտէզին՝ աղբիւրից մի քիչ հեռու
նստեց հանգստանալու: Նա այժմ մի փոքր
սիրտ առաւ, որ մի բարերար մարդ՝ իրան
անտառից դուրս կըհանի եւ ցոյց կըտայ ի-
րանց գիւղի ճանապարհը:



II

ամասփիւռը այսպէս մտածելիս, նրա
քունը տարաւ եւ խոր քնի մէջ մը-
տաւ: Այդ ժամանակ արեւը իր վեր-
ջին ճառագայթներն էլ երկրից հեռացրեց.
մութը վրայ հասաւ, իսկ Համատիւռը հան-
գիստ քնած էր պարտէզի մօտ, պարսպի
տակը, քաղցր երազներով լցուած: Երազի մէջ
մէկը միւսից յետոյ յայտնւում են երեք ծեր,
որոնցից առաջինն ասում է Համատիւռին.
«Մի վախենար, աղջիկս, ես քո պահապան
հրեշտակն եմ, որ քեզ մինչեւ այստեղ հաս-
ցրի եւ անվտանգ պահպանեցի, իսկ այժմ
քեզ բախտաւորացնելու ժամանակն հասել է,
բարիւթեանդ համար քո ամեն մի մազը
ուսկէ թել կըդառնայ»: Երկրորդ ծերունին էլ

տալիս է Համասփիւռին իր օրհնութիւնը եւ ասում. «Քո աշխատասկրութեան փոխարէն տալիս եմ քեզ իմ բարիքը, թող քո զգեստներդ ոսկէ թերթերի փոխուին»։ Երրորդ ծերունին Համասփիւռին այս օրհնութիւնը տըւեց. «Որովհետեւ գու քո մօրդ միշտ հնազանդ աղջիկ ես եղել եւ նրա տուած խրատները միշտ լսել ես, դրա փոխարէն քեզ պարգետում եմ, որ քո մատներդ լցուեն գեղցիկ գոհարեայ մատանիներով»։ Համասփիւռը՝ երազի մէջ շատ ուրախացած՝ յանկարծ զարթեց եւ նայեց իր վրան եւ ինչ տեսաւ . . . Ծերունիների խոստմունքները կատարուած . . . գլխի մազերը, մատանիները եւ ամբողջ զգեստը մի այնպիսի փայլմունք էին տալիս, ինչպէս արշալուսի ժամանակ արեւի երեւալը։ Առաւօտ էր, բայց գեռ եւս արեւը չէր ծագել։ Համասփիւռը զարմացած նայում էր իր վրայ, նա մնացել էր ապշած. եւ երբ սթափուեց, ուրախացաւ այդ բանից, բայց միեւնոյն ժամանակ մտածում էր, թէ ինչ հնարքով կարողանայ իրանց գիւղի ճանապարհը գտնել եւ անվտանգ տուն հասնել մօրը ուրախացնելու։ Նա լաւ գիտէր, որ

մայրն ամբողջ գիշեր իր համար անհանգիստ պիտի լինէր, եւ ցանկանում էր շուտով հասնել տուն։

Նա այս մոտածմունքի մէջ էր, երբ յանկարծ պալատի պարսպի գուներից գուրս եկաւ իշխանի ախոռապետը գեղեցիկ հագնուած, մի խումբ ձիաներով եւ մի քանի այլ ծառաներով։ Նրանք ձիաներն աղբիւրն էին բերել ջուր տալու։ Համասփիւռը, որ այդ աարօրինակ զգեստներով մարդկանց տեսաւ, սարսափեց եւ երկիւղից մտաւ պարտէզի ցանկի մի բացուածքի մէջ եւ թագնուեց։ Այդ միջոցին նոր ծագող արեւն իր առաջին ճառագայթը ձգեց Համասփիւռի վրայ եւ նրա զգեստներից առաջացրեց մի զօրեղ փայլ, որն եւ ընկնելով ջրով լի աւազանի մէջ՝ նոյն տեսակ փայլմունքներ առաջացրեց ջրի մակերեւոյթի վրայ։ Այս անսովոր փայլմունքներից ձիաները խրտնեցին եւ նրանցից ոչ մէկը չէր ուզում ջրին մօտենալ. ծառաները շատ աշխատեցին ձիաներին ջուր տալու եւ կամ լողացնելու, չկարողացան։

Իշխանի ախոռապետը եւ ծառաները զարմացած նայում էին աւազանի ջրին եւ

ՀԵԻՆ կարողանում գուշակել թէ ի՞նչ տեղից
էին առաջացել այդ ջրային փայլմունքները։
Նրանք կարծեցին թէ՝ սա մի հրաշք է. գնա-
ցին պալատը եւ պատմեցին իշխանին այդ
բանը։ Քիչ ժամանակից յետոյ իշխանն իր
որսկան շներով եկաւ աւազանի մօտ։ Նա իս-
կոյն հրամայեց շներին, որ որս փնտրելու
գնան։ Շները պարտէզի չորս կողմը ցրուե-
ցան. նրանցից մէկը կանգ առաւ պարտէզի
ցանկի մօտ եւ, անդադար հաջելով թագ-
նուած Համասփիւռի վրայ, իմաց արաւ իշ-
խանին իր գտած որսի մասին։ Իշխանը մօ-
տեցաւ պարտէզի ցանկին եւ ի՞նչ տեսաւ . . .
մի հրեշտակի նման փոքր աղջիկ, որի ոսկե-
թել մազերը, հրաշալի մատանիները եւ ոս-
կէթերթ զգեստները զարմացրին իշխանին։
Նա մօտեցաւ նրան քաղցր դէմքով, իսկ Հա-
մասփիւռն երկիւլից լաց եղաւ։ Իշխանը նոր
հասկացաւ ջրի մէջ փայլմունքներ երեւալու
պատճառը. իսկոյն քաղցրութեամբ հարցրեց-
Համասփիւռին, թէ նա ո՞վ է։ Խեղճ աղջիկը
մի քիչ սիրտ առաւ եւ սկսեց պատմել իր
գլխի անցըք։ Իշխանը երբ լսեց Համասփիւռի
պատմածները, փառք տուեց Աստծուն, եւ . . .

իբրեւ խնամակալ հայր ասաց. «Աղջիկս, գը-
նանք մեր պալատը, ես քեզ կը որդեգրեմ
եւ գու բախտաւոր կապրես ինձ մօտ, ինչպէս
իմ հարազատ զաւակ»։

Համասփիւռը, որ գեռ եւս յափշտակ-
ւած էր ծերունիներից ստացած օրհնութիւն-
ներով եւ պարգեւներով, ահա այժմ էլ մի
այլ մեծ բախտի է արժանանում։ Նա հաս-
կացաւ, որ իշխանից իրան հեռանալ չեն թող-
նում, ասաց. «Ես կըհամաձայնեմ, եթէ իմ
տառապեալ մօրս էլ ինձ մօտ կապրեցնես.
Ես առանց նրան չեմ կարող հանգիստ կեանք
ունենալ, աւելի լաւ էր ինձ հայրական եր-
դեկիս տակ մօրս հետ ապրել, ես միշտ նրա
կարօտը քաշում եմ եւ գիտեմ, թէ նա ինձ
համար ինչ լացի եւ սգի մէջ կլինի»։

— Բարի է քո ունեցած ցանկութիւնը,
ասաց իշխանը, գնանք մեր պալատը, ես իմ
մարդկանց կըհրամայեմ, որ գնան գտնեն քո
մօրը եւ քեզ մօտ բերեն։

Այս ասելուց յետոյ իշխանն իր ծառա-
ներին հրամայեց, որ որսի գնալու պատրաս-
տութիւն տեսնեն, իսկ ինքը Համասփիւռի
ձեռքից բռնած՝ տարաւ նրան պալատը։ Նա

իսկոյն իր մունետիկին հրամայեց, որ երթայ
անտառի շրջակայ գիւղերում յայտնէ Հա-
մասփիւռի մասին եւ երբ կըդտնէ նրա մօրը,
նոյն օրն եւ եթ բերէ իր պալատը: Դրանից
յետոյ իշխանն որսի գնաց, իսկ Համասփիւռին
թողեց պալատումը, որ սպասէ մունետիկի
վերադառնալուն եւ առանց իրան ոչ մի տեղ
չքնայ, անգամ իր մօրն էլ չըյայտնուի: Այն
օրուանից արգէն անցել էր երեք օր եւ գեռ
ոչ իշխանն էր որսից վերադարձել եւ ոչ էլ
իշխանի ուղարկած մունետիկը:

—○○○○○—

III

Երրորդ օրը մթնով պալատի պարսպի
մէծ գրան մօտ մի գեղջկուհի երեւաց
զնցոսի շորերավ եւ յայտնեց գունա-
պանին, որ ինքն եկել է իշխանի մօտ իր
խնդիրը բերանացի յայտնելու նրան, որովհե-
տեւ իշխանն որսից գեռ եւս չէր վերադար-
ձել, ուստի այդ բանը յայտնեցին Համասփիւ-
ռին: Նրա կարգադրութիւնով գեղջկուհին
մնաց պալատում գտնուող աղախինների սե-
նեակում մինչեւ իշխանի գալը:

Համասփիւռն ուրախութիւն զգաց իր
սրտի մէջ եւ ուզեց անպատճառ տեսնել նոր-
եկող գեղջկուհուն: Նա վայր իջաւ պալատի
վերին յարկից, մտաւ աղախինների սենեակը
եւ ում տեսաւ . . . իր սիրելի մօրը, որն եկել
էր իշխանից օգնութիւն ինդրելու, իր միակ
դստերը, որ կորցրել էր, գտնելու համար:
Համասփիւռն իսկոյն չըյայտնուեց իր մօրը,
մի կողմը քաշուելով՝ նա ծածուկ լաց եղաւ
եւ հեռանալով վճռեց, որ մօրը չըյայտնուի:

մինչեւ իշխանի վերադարձը։ Գեղջկուհին
այնպէս էր շուարուել, որ իր հարազատ Հա-
մասփիւռին ըլ ճանաչեց, մանաւանդ որ նա
տեսնում էր իր առաջ կանգնած թանկագին
զգեստով զարդարուած մի աղջիկ։ Համաս-
փիւռը փառք տուեց Աստրծուն, որ իր մօրը
կարողացաւ տեսնել. նա աւելի ուրախ էր
այն պատճառով, որ մինչեւ իշխանի վերա-
դառնալն ինքը հոգս կրտանի իր մօր հան-
գըստութեան համար։ Նա պալատի սենեակից
ծածուկ դիտում էր իր մօր ամեն շարժ-
ւածքները, մանաւանդ, երբ աղախիններից
մէկը նրա համար ուտելիք էր տանում։ Նա
տեսնում էր թէ ինչպէս իր մայրը՝ իր ձեռ-
քերը դէպի պալատի սենեակները բարձրա-
ցնելով՝ օրհնում էր իր բարերարուհուն։ Հա-
մասփիւռը շատ էր տանջուում անյայտութեան
մէջ մնալու համար. նա երբեմն մտնում էր
իրան ննջարանը, ծածուկ լաց էր լինում,
Աստրծուց խնդրում էր, որ իշխանը շուտ
գայ պալատը եւ ինքն՝ իր մօրը յայտնուելով՝
նրա քաղցր համբոյրներին արժանանայ։ Խեղճ
կինը ըրկարողանալով դիմանալ վշտին՝ հիւան-
դացաւ։

Ոնցան օրեր. իշխանն որսից չըվերա-
դարձաւ, մի կողմից Համասփիւռն էր հալ-
ւում մաշւում եւ իր մօր ձայնի ու քաղցր
համբոյրի կարօտը քաշում, միւս կողմից հիւ-
անդ մայրն օրերն էր համարում եւ որքան
էլ իշխանն ուշանում էր, նոյնքան էլ հիւ-
անդը վատանում էր. նա ուտելիսելու ա-
խորժակն էլ կորցրեց եւ՝ ուժասպառ լինե-
լով՝ սենեակից գուրս գալ էլ չըկարողացաւ
երբ Համասփիւռն իմացաւ իր մօր մերձիմահ
լինելը, ըրհամբերեց, նա գուրս ընկաւ պալա-
տի սենեակներից, գնաց հիւանդի բնակարանը
եւ ինչ տեսաւ . . . հիւանդը՝ իր վերջին
ոյժը հաւաքած մի կողքի վրայ թեքուելով՝
աչքերը ձգել էր մեծ դրան կազմը եւ իշխանի
գալուն էր սպասում։ Համասփիւռը ըլ համբե-
րեց եւ սկսեց բարձր ձայնով լալ եւ ասել.
«Մայրիկ, ես քո Համասփիւռն եմ, Աստուած-
ինձ մեծ բախտի արժանացրեց, դու էլ ինձ
հետ բախտաւոր պիտի ապրես իշխանի պա-
լատի մէջ, որ ինչպէս դու՝ այնպէս էլ ես էի
սպասում նրա գալուն, ես չէի ուզում ա-
ռանց իշխանի գիտութեան քեզ յայտնուել,
բայց երբ ծանր հիւանդացար, էլ չըկարողա-

ցայ իշխանի գալուն Համբերել. սիրոս այժմ
մզրմզրում է, որ դու այդ դրութեան մէջ
ես : Հիւանդին շրջապատող աղախինները եւ
Համասփիւռի նաժիշտը, երբ լսեցին Համաս-
փիւռի անածը, ապշած նայում էին երբեմն
հիւանդի, երբեմն Համասփիւռի վրայ : Նրանք
միմեանց հետ խօսելով, գովում էին Համաս-
փիւռի ունեցած Համբերութիւնը, իսկ մերձի-
մահ հիւանդը խօսելու կարողութիւնը չունե-
նալով՝ միմիայն քաղցր հայեացքներով եւ
Համբայրներով էր պատասխանում իր սիրելի
աղջկան . նա նշանով աղջկանից շուր խնդրեց
եւ Համասփիւռն էլ բաժակով ջուր մօտեցրեց
նրա բերանին . մի քիչ ժամանակից յետոյ իր
մատներով սկսեց շինել իր մօր աշքերը եւ
նկատեց որ նրանք յաւբեան վիակուեցան .
Համասփիւռը շատ ողաց իր մօր վրայ եւ
տեսնելով, որ իշխանն ուշանում է, իր մօր
թաղման Համար հոգս տոմրաւ : Նրա ցանկու-
թեան համաձայն՝ հանգուցեալի Համար գե-
րեզման պատրաստեցին մարտէզից դուրս այն
մատում, ուր որ ինքը մի գիշեր քնել եւ
երացի մէջ օրհնութիւններ ստամալով բախ-
տաւորուել էր . մօտակայ գիւղից քահանայ


Հրաւիրեցին եւ անշուք թաղեցին նրան :
Թաղման երրորդ օրն իշխանն որսից վե-
րադարձաւ պայտա . նրան պատմեցին ըոլորը,
իսկ Համասփիւռը սգի շորերով ծունկ չորեց
իշխանի առաջ եւ լալով պատմեց իր մօր
գալու, հիւանդանալու եւ մահուան մասին .
նա այն էլ յայտնեց, որ ինքը սպասում էր
նրա գալուն, որ նրա ներկայութեամբ յայտ-
նուի իր տարածախտ մօրը : Երբ իշխանը
լսեց Համասփիւռի այդ խօսքերը, նրա ճակա-
տը Համբուրեց եւ ասաց . «Որովհետեւ գու
քո երջանկութեան ու բախտաւորութեան օ-
րերում ըլմուռացար քո մօրը եւ նրան թաղել
տուիր քո բախտաւորութեան տեղը, թող
այսուհետեւ քո տրտմած սիրու մի ուրիշ
բախտաւորութիւնով սփոփուի . ես նշանում
եմ քեզ իմ որդուս հետ եւ իմ կենդանու-
թեան ժամանակ ձեզ եմ տալիս իմ կալ-
ւածքիս կէսը, թող Աստուած օրհնէ այս
նշանադրհմթիւնը» :

Այս ասելուց յետոյ իշխանը մարդիկ ու-
ղարկեց իր հայրենի քաղաքը եւ կանչել տը-
ռեց իր միակ որդուն, եւ երբ նա եկաւ ան-
տառի պալատը, իշխանը դուրս հանեց Հա-

մասփիւռին նրա առաջ, որի աջ ձեռքը տալով
իր որդու աջ ձեռքին՝ օրհնեց երկուսին, տա-
լով Համասփիւռին որդու մատանին, իսկ
Համասփիւռի բախտաւոր մատանիներից մէկն
էլ հագցրեց իր որդու մատին:

Միւս օրն եւ եթ իշխանը խնջոյք կազ-
մեց, հրաւիրեալներին յայտնի եղաւ Համաս-
փիւռի բարի համբաւը, եւ երբ երկու նոր
նշանուածները կատարեալ հասակն առան, իշ-
խանը նրանց պսակեց, եւ այնուհետեւ նոր
ամուսնացող զոյգերը երջանիկ էին ապրում:
Աստուած էլ օրհնեց նորապսակ զոյգերին եւ
նրանք շատ զաւակների ծնող դարձան: Հա-
մասփիւռը իր մօր գերեզմանը շքեղ մահար-
ձանով զարդարել տուեց եւ ուխտեց իր սի-
րելի մօր յիշատակն անմահացնելու համար՝ իր
համագիւղացիներին ձեռքից եկած ամեն օգ-
նութիւն հասցնել:





Օգոստը նուիրուած է Մետեխի բանտի
գրադարանին:

Վաճառւում է Թիֆլիսի Հայ գրավա~
ճառանցներում:

ՀՀ Ազգային գրադարան

20.13



